Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 10-05-2022 թ. որոշմամբ
««ԶՎԱՐԹՆՈՑ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԶՎԱՐԹՆՈՑ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Ճառագայթային փող. շ. Բ բն. 35
1.3 Պետական գրանցման համարը		222.160.121017
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-07-03
1.5 ՀՎՀՀ-ն		01253086
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94407602
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.zvartnots.mhk.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		zvartnots.himnadram@mail.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը		
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Տոկոսային եկամուտ ավանդից	5,670,000
	Կանոնադրական նպատակների համար	50,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների համար	70,000
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	555,000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	0	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 14 թերթից:
թերթերի քանակը

Digitally signed by AVAGYAN RUBEN 2308430052
Date: 2022.06.30 16:53:56 AMT

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն

2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Զվարթնոց տաճարի վերականգնման» Հիմնադրամ

Երևան – 2022

«Զվարթնոց տաճարի վերականգնման»
հիմնադրամ
Հայաստանի Հանրապետություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel: (+374 10) 399 855, (+374 55) 560 550

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

« Զվարթնոց տաճարի վերականգնման »
հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Զվարթնոց տաճարի վերականգնման» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հայտնորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև

ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է
«Ջի ընդ Քո. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն/աուդիտոր Լ.Պողոսյան

«06» հունիս 2022թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Զվարթնոց տաճարի վերականգնման» հիմնադրամ
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծանոթագրություններ	31.12.2021 հազ. դրամ	31.12.2020 հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		-	-
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր տոկոսների գծով	3	*2,839*	*4,343*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	*36,008*	*30,845*
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***38,847***	***35,188***
Ընդամենը ակտիվներ		***38,847***	***35,188***
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված հավելուրդ		*19,190*	*15,693*
Ընդամենը զուտ ակտիվներ		***19,190***	***15,693***
Ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		*593*	*276*
Ծախսումներին վերաբերող շնորհներ	5	*19,064*	*19,219*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***19,657***	***19,495***
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		***38,847***	***35,188***

10-ից 14-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Ա.Ավագյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
«Գնարթնոց տաճարի վերականգնման» հիմնադրամ
2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2021 հազար դրամ	2020 հազար դրամ
Եկամուտներ			
Եկամուտ ճանաչված շնորհներ		275	298
Ֆինանսական **ներդրումից** եկամուտներ	6	4,166	3,062
Ընդամենը եկամուտներ		4,441	3,360
Ծախսեր			
Վարչական ծախսեր	7	(275)	(298)
Ընդամենը ծախսեր		(275)	(298)
Արտարժույթի **փոխարժեքային** տարբերությունից եկամուտ/ծախս		(72)	10
Արդյունք մինչև հարկումը		4,094	3,072
Շահութահարկի գծով ծախս	8	(598)	(498)
Տարվա համապարփակ **ֆինանսական** արդյունք		3,496	2,574

10-ից 14-րդ **էջերում** ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի **մասը:**

Տնօրեն
Դ.Ավագյան

Զուտ **ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն**

«Զվարթնոց տաճարի վերականգնման» հիմնադրամ

*2021թ **դեկտեմբերի** 31-ին ավարտված տարվա համար*

հազար դրամ

	Կուտակված հավելաճ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	13,119	13,119
Տարվա **զուտ** շահույթ	2,574	2,574
Մնացորդը **առ** 31 դեկտեմբերի 2020թ.	15,693	15,693
Տարվա **զուտ** շահույթ	3,496	3,496
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	19,190	19,190

10-ից **14-րդ** էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տիգրան
Ռ.Ավագյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Զվարթնոց տաճարի վերականգնման» բարեգործական հիմնադրամ
2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2021	2020
	հազ. դրամ	հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Որպես նվիրատվություններ և նվիրաբերություններ ստացված դրամական միջոցներ	120	514
Վճարումներ ծառայությունների գծով	(240)	(250)
Վճարումներ պետական մարմիններին	(280)	(127)
Այլ վճարումներ	(35)	(47)
Գործառնություններից ստացված/ (գործառնությունների համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(435)	90
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	5,670	476
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	5,670	476
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված տոկոսներ	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)	5,235	566
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(72)	10
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ մնացորդներ դրամարկղում և բանկային հաշիվներում	36,008	30,269
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ մնացորդներ դրամարկղում և բանկային հաշիվներում	36,008	30,845

10-ից 14-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Ռ. Ավագյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Զվարթնոց տաճարի վերականգնման» հիմնադրամ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, հազար դրամով

1. Հիմնադրամի գործունեության բնույթը

«Զվարթնոց տաճարի վերականգնման» հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է:
Հիմնադրամը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2012թ. հուլիսի 03-ին, պետական գրանցման համարն է 222.160.121017, ՀՎՀՀ-ն՝ 01253086

Հիմնադրամը ստեղծվել է Զվարթնոց տաճարի վերականգնումն ապահովելու նպատակով:

Հիմնադրամի գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ճառագայթային փող. «Բ» շենք, բն 35

Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է հետևյալ տասնմեկ անդամներց

- Ավագյան Լյուդմիլա Նիկոլայի / հոգաբարձուների խորհուրդի նախագահ/
- Տեր Սիոն եպիսկոպոս Ադամյան / հոգաբարձուների խորհուրդի նախագահ տեղակալ/
- Տեր Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյան / հոգաբարձուների խորհուրդի նախագահ տեղակալ/
- Բալայան Զորի Հայկի
- Վարդանյան Վաղարշակ Ներսեսի
- Պետրոսյան Աստղիկ Բորիսի
- Հակոբջանյան Հրաչիկ Արամայիսի
- Հովհաննիսյան Հովհաննես Թալիշի
- Մելքոնյան Արթուր Ազատի
- Այվազյան Արթուր Բագրատի
- Սարգսյան Նաիրի Արծրունի

2. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության համառոտ ամփոփում

2.1. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

2.2. Չափման հիմքը

Ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են սկզբնական (պատմական) կամ ամորտիզացվող արժեքով:

2.3. Չափման և ներկայացման արժույթը

Հիմնադրամի համար որպես չափման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ), որը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության կանոնից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.5. Համադրելիությունը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

2.6. Եկամուտներ և ծախսեր

Եկամուտները և ծախսերը հաշվառվել են հաշվեգրման հիմունքով, այսինքն՝ նրանք համարվել են եկամուտ կամ ծախս դրանց տեղի ունենալու պահին անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից:

Հիմնադրամը կիրառվում է պետական շնորհների հաշվառման եկամտային մոտեցումը, որի համաձայն՝ շնորհը ճանաչվում է շահույթում կամ վնասում մեկ այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված է շնորհը

Պետական շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, ճանաչվում է շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

2.7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Որպես դրամական միջոցներ են ճանաչվել Հայաստանի Հանրապետության բանկերում տեղաբաշխված ընթացիկ հաշիվները (ազգային արժույթով և արտարժույթով), ինչպես նաև հիմնադրամի կողմից բանկերում ներդրված ավանդները: Դրամական միջոցների մասին հաշվետվությունը կազմվել է ուղղակի մեթոդով:

2.8. Շահութահարկ

Հիմնադրամի շահութահարկը բաղկացած է միայն ընթացիկ շահութահարկից: Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

3. Դեբիտորական պարտքեր տոկոսների գծով

	- 2021 -	- 2020 -
«Յունիբանկ» ԲԲԸ	-	331
«Էվոկաբանկ» ԲԲԸ	2,839	4,012
Ընդամենը	**2,839**	**4,343**

Տոկոսների գծով դեբիտորական պարտքերը ձևավորվել են ծանոթագրություն 4-ում նշված բանկային ավանդների հաշվեգրված և դեռևս չվճարված տոկոսների գծով:

4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2021	31.12.2020
Դրամական միջոցներ հաշվարկային հաշիվներում	665	430
Դրամական միջոցներ արտարժութային հաշիվներում	343	415
Դրամական միջոցներ ավանդային հաշիվներում	35,000	30,000
Ընդամենը	**36,008**	**30,845**

Ավանդը ներդրվել է մինչև 2023թ մարտի 27-ը, այնուամենայնիվ Հիմնադրամն իրավունք ունի ավանդի պայմանագրի ժամկետից շուտ դիմել և ետ ստանալ ավանդի գումարը:

5. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	Մնացորդ 01.01.2021	Ավելացում	Նվազեցում	Մնացորդ 31.12.2021
Նվիրատվություններ և նվիրաբերություններ	19,219	120	275	19,064

6. Ֆինանսական ներդրումներից եկամուտներ

	- 2021 -	- 2020 -
Ավանդների հաշվեգրված տոկոսներ	4,166	3,062
Ընդամենը	**4,166**	**3,062**

Հիմնադրամը ստացված և կուտակած նվիրատվության գումարները ավանդի տեսքով ներդրել է ՀՀ առևտրային բանկերում, որի գծով էլ հաշվեգրվել են վերոնշյալ տոկոսները: Ստացված տոկոսները նույնպես օգտագործվում են ավադների ներդրման համար՝ հետագայում կանոնադրական նպատակներով օգտագործելու նպատակով:

7. Վարչական ծախսեր

	- 2021 -	- 2020 -
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	240	250
Բանկային ծառայությունների և այլ վարչական ծախսեր	35	48
Ընդամենը	275	298

8. Շահութահարկի գծով ծախս

	2021	2020
Ընթացիկ հարկի գծով ծախս	598	498
Շահութահարկի գծով ընդհանուր ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**598**	**498**

9. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Առևտրային գործարքներ

Ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամը կապակցված և այլ կողմերի հետ առևտրային գործարքներ չի իրականացրել:

Գործարքներ ղեկավարության հետ

- *Ղեկավարության վարձատրություն*

Հիմնադրամի տնօրենի համար հաշվետու, ինչպես նաև նախորդ տարում աշխատավարձ և վարձատրության այլ գումար չի հաշվարկվել և չի վճարվել:.

10. Պարտավորություններ (պահանջներ)

Պարտավորություններ կապիտալ ներդրումների գծով

Հիմնադրամը 31.12.2021թ. և 31.12.2020թ. դրությամբ չունի պարտավորություն կապիտալ ներդրումների գծով:

Պարտավորություններ (պահանջներ) գործառնական վարձակալության գծով

Հիմնադրամը 31.12.2021թ. և 31.12.2020թ. դրությամբ չունի կնքված չդադարեցվող վարձակալության պայմանագրեր:

11. Պայմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ

Հիմնադրամը 31.12.2021թ. և 31.12.2020թ. դրությամբ ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ չի ունեցել:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամի գույքը և մասնավորապես ներդրված ավանդները ապահովագրված չեն:

Իրավական պարտավորություններ

Հիմնադրամի ղեկավարությունը տեղյակ չէ Հիմնադրամի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է և հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկային խնդիրներն ուսումնասիրվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը չունի

լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

12. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

13. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2022թ հունիսի 6-ին:

Տնօրեն

Ռ. Ավագյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2022 16:43